ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01

№ 592

28 հունիս 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՄԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանոսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 21.06.2021թ. մինչև 25.06.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 215-Ա 22 հունիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացիներին տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Հ/Հ	Ազգանուն անուն, հայրանուն	Գումարը
1.	Գասպարյան Անուշ Վահանի	18000
2.	Լևոն Վլադիչի Սարգսյան	30000
	Ընդամենը 48000 (քառասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ	48000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

22 հունիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 216-Ա **25 հունիսի 2021 թվական**

ԱՐԱՄ ԴԱՐՎԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից կազմված 11.06.2021 թվականի արձանագրությունը, և 18.06.2021 թվականի իրավաբանի եզրավարությը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և 25.06.2021 թվականի Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Արամ Դարվինի Հովհաննիսյանի կողմից հատած Մարտունի համայքնի Մյասնիկյան փողոցի թիվ 18 բազմաբնակարան շենքի մայթային հատվածում գտնվող մոտ 9 մետր բարձրություն ունեցող Եղևնի տեսակի ծառի 8 ճյուղերի փաստը և և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի պարբերության, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 26 -րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արամ Դարվինի Հովհաննիսյանի նկատմամբ նշանակել տուգանք 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով քաղաք Մարտունի Մյասնիկյան փողոցի թիվ 18 բազմաբնակարան շենքի մայթային հատվածում գտնվող մոտ 9 մետր բարձրությամբ Եղևնի տեսակի ծառի 8 ճյուղերը հատելու համար, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի պարբերության հիմքով:
2.Պահանջել Արամ Դարվինի Հովհաննիսյանից 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը վճարել համայնքապետարանի 900145101169 հաշվի համարին 15-օրյա ժամկետում:
3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան-գլխավոր մասնագետ Զավիկ Խաչատրյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Դարվինի Հովհաննիսյանի որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

25 հունիսի 2021 թվական
ք. Մարտունի